ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 28

ՀԱՍՏԱՏԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ 08.12.2020 ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

Որոշեց

1.Մրգանուշ համայնքի 2020 թվականի բյուջեյի ինն ամսվա կատարողականը եկամուտների և ծախսերի գծով

2.Գույքագրումից ստացված արդյունքների մասին

3.Մրգանուշ համայնքի 2021թ-ի տեղական տուրքերի և վճարների մասին

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՑՈՒԱԿ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 29

ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆԸ ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1/ենթակետի պահանջներով՝

Որոշեց

Եկամուտների կատարողականը՝

հ/հ	Եկամտատեսակը	պլան	փաստացի	%
1	Հողի հարկ	3260.0	1104.0	33.9
2	Գույքահարկ	5043.0	1548.5	30.7
3	Հողի վարձավճար	88.0	18.0	20.4
4	Տեղական տուրք	541.0	501.5	92.7
5	Աղբահանության վճար	1158.0	90.0	7.8
	ընդամենը	10090.0	3262.0	32.3
1	Մուտքեր օտարումից	150.0	148.125	98.8
	Ծախսեր			
4111	Աշխատավարձ	19700.0	13952.8	70.8
4212	Էներգետիկ ծառ.	2150.0	1271.6	59.1
4213	Կոմունալ ծառ.	1389.0	1041.75	75

4214 Ինտերնետ կապ	108.0	72.0	66.7
4216 Գույքի և սարք.վարձ.	900.0	675.0	75
4231 Վարչական ծառ.	150.0	150.0	100
4232 Համակարգչ.ծառ.	172.0	48.0	27.9
4234 Տեղեկատվական ծառ.	120.0	65.0	54.2
4241 Մասնագիտական ծառ.	660.0	270.0	40.9
4239 Ընդհ.բնույթի այլ ծառ.	481.5	55.0	11.4
4251 Շենք շին.ընթ. նորոգ.	50.0	-	-
4261 Գրասեն. նյութեր	200.0	100.0	50
4269 Հատուկ նպ. այլ նյութ	965.0	480.0	49.7
4637 ընթ.դրամ.ոչ առև.կազմ.	500.0	-	-
4726 Հուղարկավ. նպաստ	520.0	400.0	76.9
4729 Այլ նպաստ	2000.0	1345.0	67.3
5134 Նախագծահետ.ծախս	400.0	400.0	100
4823 Պարտադիր վճարներ	300.0	3.0	1
4891 Պահուստային ֆոնդ	1723.5	-	-
5113 Շենք. շին.կապ.նորոգ.	235.0	235.0	100

Մրգանուշ համայնքի 2020 թվականի ինը ամսվա կատարողականը եկ. և ծախսերի գծով համարել բավարար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՅՈՒԼԱԿ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 30

ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով

Որոշեց

Հաստատել Մրգանուշ համայնքի գույքագրման արդյունքները .

Մրգանուշի համայնքապետարան

1.Համայնքապետարանի շենք

2.Մշակույթի տուն

3.Բուժարանի շենք

4.Կշեռք մեքենաների

5.Գազատար խողովակ

6.Կաթսայատուն

7.Ջեռուցման համակարգ 1

8.Համակարգիչ 4

9.Պատճենահանող սարք 3 հատ

10.Բարձրախոս GENIUS կոմպլեկտ

11.Հանգստի գոտու շարժական նստարան 7 հատ

12.Հանգստի գոտու անշարժ նստարան 17

13.Ոռոգման ցանցի կիսախողովակ 61 հատ

14.UPS 3 հատ

ՔԱՆԱԿ

1.Գրասեղան 2

2.Գրապահարան

3.Կախիչ 2

4.Դրամարկղ երկաթյա 4

6.Գրասեղան 1

7.Սեղան 5

8.Սեղան մեծ 1

9.Գրասենյակային աթոռներ 12

10.Աթոռ փայտյա 1

11.Ծերտավարագույր 6/պատ/

12.Էլ.վառարան 1

13.բազկաթոռ 1

ՄԾԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ ՔԱՆԱԿ

1.Գրասեղան 1

2.Դաշնամուր 1

3.Նկար <<Սևանի վանք>>1

4.Նկար <<Ավ.Իսահակյան>>

5.Դահլիճի աթոռներ 60

ԳՐԱԴԱՐԱՆ ՔԱՆԱԿ

1.Գրասեղան 1

2.Կատալոգի արկղ

3.Երկաթյա գրադարակ 54

4.Սեղան փոքր 1

5.Էտաժերկա 2

6.Գրականություն 11470 կտոր

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՑՈԼԱԿ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 31

2021 ԹՎԱԿԱՆԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>Հայաստանի Հանրաետության օրենքի 11-րդ,12-րդ,14-րդ հոդվածներով և <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով ավագանին

Որոշեց

1.Սահմանել համայնքի 2021թ-ի տեղական տուրքերի դրույքաչափերը.

1.ՀՀօրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի վարչական տարածքում նոր շենքերի,շինությունների և ոչ հիմնական շինությունների /տեղադրման /բացակայությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվության չպահանջող դեպքերի թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար

Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական,բնակելի այդ թվում այգեգործական/ամառային /տների,ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար 7500 դրամ:

բ. սույն կետի <<ա>>ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201 -ից մինչև 500քմ մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ:

- 5001-ից մինչև 1000քմ մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ:

- 1001 -ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝35000 դրամ:

- 3001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000դրամ:

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- 20քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝1500 դրամ:

- 20քմ և ավելի ընհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝2500 դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների,վերակառուցման,վերականգնման,ուժեղացման,արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով/ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների ,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 15000 դրամ:

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների,շենքերի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա /հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն,բացի սույն կետի ա/ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա սույն օրենքի մասով այն համարվում է նոր շինարարության համարսույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների և քաղաքաշինական այլ օբեկտների քանդման /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվությունն ընդլայնող դեպքերի/թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500դրամ:

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ 150000դրամ:

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի,մանրածախ առևտրի կետերում ծառայության օբեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ 18000 դրամ:

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրերում մանրածախ առք վաճառքի իրականացնելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ 15000դրամ:

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհալային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26քմ մակերես ունեցող հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 18000դրամ:

-26-ից մինչև 50քմ մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 32000դրամ:

-51-ից մինչև 100քմ մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝4100դրամ:

-101-ից մինչև 200քմ մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝6200դրամ:

-201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7700դրամ:

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1800դրամ:

- 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3200դրամ:

- 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4100դրամ:

- 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6200դրամ:

-201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7700դրամ:

10. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում " Առևտրի և ծառայությունների մասին" ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 105դրամ 1քմ-ի համար:

11.Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին, խաղատներին ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝

աա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50000դրամ

գ. բաղնիքների /սաունաների/ համար՝ 250000 դրամ

դ. խաղատների կազմակերպման համար՝ 500000դրամ

ե. շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000դրամ

զ.վիճակախաղերի կազմակերպման համար՝ 75000 դրամ

12.Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի կազմակերպման և իրացման համար՝ 1500դրամ

- 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ

- 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ

- 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000դրամ

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունցող հանրային սննդի կազմակերպման և իրացման համար՝ 300դրամ

- 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 600դրամ

- 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1200դրամ

- 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2400դրամ

14.Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս 1քմ-ի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանքով գովազդող արտաքին գովազդի՝ 600դրամ

բ. թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1050դրամ

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 450 դրամ

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 113դրամ

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 45 դրամ:

15.Մրգանուշ համայնքի անվամբ, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ:

16. Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 դրամ:

2. Սահմանել համայնքի 2020թ-ի տեղական վճարների դրույքաչափերը:

1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ:

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող,բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների այդ թվում՝դրանց վերակաթուցումը,վերականգնումը,ուժեղացումը,արդիականացումը,ընդլայնումը ու բարեկարգումը /կառուցման ավարտը,ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ:

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշծատանքներնավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքիմատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ:

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո օգտվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝համայնքի մատուցած ծառայությունների համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ:

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայության դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ:

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառների /վերնիսաժներին/ մատուցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 500 դրամ:

7) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար՝ փոխհատուցման վճար՝ 200 դրամ:

8) Աղբահանության վճար սահմանել.

ա) առևտրի և հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների համար աղբահանության վճար սահմանել՝ ամսեկան 20 դրամ,ամեն 1քմ համար:

բ) արտադրական արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար աղբահանության վճար սահմանել ամսեկան 20 դրամ ամեն 1քմ համար:

գ) կրթական ,առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների համար աղբահանության վճար սահմանել ամսեկան 2 դրամ ամեն 1 քմ համար:

դ) համայնքի անդամների համար աղբահանության վճար սահմանել ամսեկան 100 դրամ մեկ շնչի համար:

9) Անասնաբուժական ծառայության վճար.

ա)Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն - 500 դրամ

բ)Ծննդօգնություն՝

բա) թեթև միջամտություն - 1000դրամ

բբ) ծանր միջամտություն - 5000դրամ

գ)արյուն առում կամ այլ նմուշ առում՝ մանրակենդանի -100դրամ, խոշոր կենդանի - 200 դրամ, բացառությամբ /գյուղատնտեսական կենդանիների պատվաստում/ պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների,

դ)կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար -200 դրամ

ե)ախտահանություն -1քմ 100 դրամ

զ)միջատազերծում /դեզինսեկցիա/ -1քմ 100դրամ

է)կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/ - 1քմ 200 դրամ

ը)արհեստական սերմնավորում - 5000 դրամ

թ) կենդանու հերձում՝ մանր կենդանի -1000 դրամ, խոշոր կենդանի - 3000 դրամ

ժ)կենդանու բուժում, կախված հիվանդությունների տեսակից և կենդանու տեսակից յուրաքանչյուր այցելությունը՝ մանր կենդանու - 1000 դրամ, խոշոր կենդանու - 2000 դրամ.

ի) կենդանիների նախասպանդային զննում՝ մանր կենդանի - 1000 դրամ, խոշոր կենդանի -2000 դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՑՈԼԱԿ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ**